ՄԵՐԺԿԻՑ
ՄԵԿԸ
ԿԵՐԿՈՂՈՒՄ ՉԵԼԻ Է

KAREN M. McMANUS

ONE OF US IS BACK

ՔԱՐԵՆ ՄԱԿՄԱՆՈՒՍ

ԱՌՋԿԻՑ ԱՌԿԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Մ 180

Մակմանուս Քարեն
Մ 180 Մեզնից մեկը վերադարձել է: Վեպ / Ք. Մակմանուս.- Եր.: Newmag, 2025.- 444 էջ:

Երրորդ խաղը ճակատագրական է: Սայմոնի մահից երկու տարի անց Բեյվյուի ընկերախումբը փորձում է հաղթահարել իրադարձությունների հետևանքները: Սկզբում նրանք ստիպված էին ապացուցել, որ մարդասպան չեն: Հետո նոր սերունդը պայքարեց վրեժխնդիր լինող կրկնօրինակի դեմ ու հաղթեց: Այժմ Բեյվյուի քառյակը վերադարձել է տուն՝ ամառային հանգստի համար: Բայց Բեյվյուում կյանքը երբեք հանդարտ չի լինում: «Նոր խաղի ժամանակն է, Բեյվյո՛ւ» գրությամբ գովազդային վահանակը սկզբում չար կատակ թվաց: Բայց թիմի անդամի անհետացումից հետո ակնհայտ էր, որ խաղն իրական է՝ առանց խաղավարի ու նույնիսկ կանոնների: Սարսափ խաղը կարող է մահով ավարտվել: Չէ՞ որ Սայմոնը ճիշտ էր. գաղտնիքները մի օր անպայման բացահայտվում են, Բեյվյուն էլ թաքցնելու շատ բան ունի:

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Գլխավոր գործընկեր՝
«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ»
տպագրատուն - հրատարակչություն
veprint.am

ISBN 978-9939-967-96-7
Text copyright © 2023 by Karen M. McManus, LLC
Քարեն Մակմանուս, «Մեզնից մեկը վերադարձել է» © 2025, «Նյումեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Մաս 1 11

Մաս 2 233

Երախտագիտության խոսք 439

Ընթերցողներիս

+ Edit

Contacts

ԱՓ **Ադի Փրենթիս**
Բեյվյուի առաջին քառյակից մեկը, «Քոնտիգո» սրճարան

ԱՓ **Աշթոն Փրենթիս**
Ադիի քույրը

ԲՌ **Բրոնուին Ռոխաս**
Բեյվյուի առաջին քառյակից մեկը, Մեյվի քույրը

ԿՔ **Կուպեր Քլեյ**
Բեյվյուի առաջին քառյակից մեկը

ԷՔ **Էլի Քլայնֆելթեր**
«Քանի դեռ ապացուցված չէ», փաստաբան, Ադիի փեսան

ԷԼ **Էմմա Լութոն**
Ֆիբիի քույրը, Բեյվյուի նախկին ուսանող

ՋՌ **Ջեկ Ռիորդան**
Ադիի նախկին ընկերը

ՔՍ **Քիլի Սորիա**
Կուպերի նախկին ընկերուհին

ՆՄ **Նոքս Մայերս**
Բեյվյուի թիմի անդամ, «Քանի դեռ ապացուցված չէ»

ՔԲ **Քրիս Բեքեր**
Կուպերի ընկերը

ԼՍ **Լուիս Սանթոս**
Մեյվի ընկերը, «Քոնտիգո» սրճարան

ՄՌ **Մեյվ Ռոխաս**
Բեյվյուի թիմի անդամ, Բրոնուինի քույրը

ՆՄ **Նեյթ Մաքոլի**
Բեյվյուի առաջին քառյակից մեկը

ՖԼ **Ֆիբի Լութոն**
Բեյվյուի թիմի անդամ, «Քոնտիգո» սրճարան

ՍՔ **Սայմոն Քելեհեր**
«Այդ մասին» բամբասանքի հավելվածի ստեղծողը

ՎՄ **Վանեսա Մերիման**
Բեյվյուի նախկին ուսանող

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ադի
Երկուշաբթի, հունիսի 22

— Լուրջ, սա՞ ենք նայելու:

Մեյվը նախ բարձրացնում է հեռակառավարման վահանակը, ապա՝ ունքերը: Զևական զարմանքը նյարդայնացնում է ինձ. չէ՞ որ փայլուն գիտի, որ դա ենք նայելու: *Այդ* պատճառով է, որ այս ամառային գեղեցիկ օրը նստած ենք հեռուստացույցի առաջ:

— Քեզ ո՞վ էր խնդրում՝ ինձ հրավիրես,– հիշեցնում եմ նրան՝ խլելով վահանակը, քանի դեռ չի շպրտել սենյակի մյուս անկյունը: Միացնում եմ հեռուստացույցը, ալիքների բաժնում փնտրում ու գտնում իմ ուզածը: – Տանն էլ վատ չէի զգում:

— Այսպիսի տեսանյութերից հետո միշտ վատ ես զգում,– ձայն է տալիս Բրոնուինը չափազանց փափուկ բազմոցի մի անկյունից:

Ռոխասների մեդիա սենյակը շատ ավելի հարմարավետ է հեռուստացույց նայելու համար, քան իմ հյուրասենյակը, դրան գումարած ևս մի առավելություն՝ հավանականությունը,

որ մայրս ներս կմտնի, զրո է: Չնայած մոռացել էի, որ հաճելի միջավայրում տեսանյութը դիտելիս շրջապատված եմ լինելու ահռելի մեծ հոգատարությամբ. մի քանի շաբաթ առաջ Բրոնուինը վերադարձել էր Եյլից՝ ամառը մեզ հետ անցկացնելու, և անմիջապես էլ սկսեց ղեկավարել իմ կյանքը, կարծես հրամաններ տվող ավագ քույրս հերիք չէր ինձ:

Չէ, չեմ բողոքում: Կարոտել եմ նրա հետ զրույցները Բեյվյուի քառյակի ընդհանուր չաթում, որի անվանումը, ճիշտն ասած, պետք է փոխել, որովհետև հիմա ինը մասնակից կա՝ ես, Բրոնուինը, Նեյթ Մաքոլին, Մեյվն ու նրա ընկերը՝ Լուիս Սանթոսը, Կուպեր Քլեյը ու նրա ընկերը՝ Քրիս Բեքերը, և Մեյվի հետ Բեյվյուի ավարտական դասարան տեղափոխված Ֆիբի Լոթոնն ու Նոքս Մայերսը: Ջույգերի չաթ է՝ բացի ինձնից և վերջին երկուսից: Չնայած երևի միայն ինձնից, քանի որ ոչ ոք այլևս չի հավատում Ֆիբիի ու Նոքսի պնդումներին, թե իրենք ուղղակի ընկերներ են:

Գուցե «Բեյվյուի թիմ»: Վերցնում եմ հեռախոսս և խմբագրում խմբային չաթի անվանումը: Վատ չէ:

— Ո՞վ է այս տղան,– հարցնում է Մեյվը և աչքերը կկոցելով՝ նայում էկրանին: – Նա կներկայանամ...

— Չէ,– արագ ասում եմ ես: – Սա «Իսթենդ Հայ» հաղորդումը չէ: Այն ժամը երեքին է սկսվում: Սա... Ճիշտն ասած՝ գաղափար չունեմ:

— Քաղաքային խորհրդի նիստ է,– ասում է Բրոնուինը: Բարևնց, կիմանա. նրա համար ժամանցային ծրագիր է: – Կարծես թե բյուջեի քվեարկությունն են ավարտում:

— Ցնցող է: Բայց գոնե *կարևոր բան է*,– Մեյվը կտրուկ շարժումով ոտքերը դնում է սուրճի սեղանին ու ցավից ծամա-

ծռվում է, երբ կրունկները խփում է մարմարե մակերեսին: – Գոնե արժանի է եթեր դուրս գալ: Ինչը չես ասի...

— Տեղական կաբելային ալիք է, Մեյվ,– ընդհատում եմ ես: – Հատուկ չեն ընտրում, թե ինչ ցույց տան:

Զայնս հանդարտ է, բայց սիրտս անհանգիստ բաբախում է, և ես տանջվում եմ երկու քարի արանքում. մի կողմից՝ կուզեի մենակ լինել, մյուս կողմից՝ շնորհակալ եմ, որ մենակ չեմ: Քաղաքային խորհրդի անդամը, որի ելույթը դիտում ենք, հայտարարում է, որ նիստն ավարտված է: Էկրանը խամրում է, և հնչում է երաժշտական դադար՝ երկու հաղորդումների միջև: Բրոնուինը, Մեյվը և ես լուռ նստած լսում ենք. «The Girl from Ipanema» երգի անսովոր խիզախ գործիքային տարբերակ է հիշեցնում:

Հետո էկրանին հայտնվում է դպրոցի կիսադատարկ լսարանը՝ «Իսթլենդի ավագ դպրոց. ամառային աշխատարանների շարք» մակագրությամբ: Մինչև կհասցնեմ արձագանքել, Բրոնուինը կտրուկ պոկվում է բազմոցից, նետվում իմ կողմն ու ամուր գրկում:

— Վայ, տեր Աստված, ինչ ես անում,– փնթփնթում եմ ես՝ հեռախոսս գցելով բարձին:

— Դու մենակ չես, Ադի,– ոգևորված շշնջում է Բրոնուինը:

Ինձ պարուրում է կանաչ խնձորի հոտը. Բրոնուինի շամպունն է: Ինչքան ճանաչում եմ նրան, դա է օգտագործում: Գուցե ավելի վաղուց, չէ՞ որ Բրոնուինը սովորության մարդ է: Մի ժամանակ, երբ Նեյթը շատ էր նեղվում իրենց հեռակա հարաբերությունների պատճառով, նրան նվիրեցի այդ շամպունից՝ մեծ կարմիր ժապավենով: Նեյթը հունից դուրս եկավ (ճիշտն ասած՝ ուզածս էլ հենց դա էր. միշտ զվարճալի

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark